Կազմված է՝«___»,«_____»,202__թ
Բաղկացած է՝__ էջից
Հաստատված է՝
ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ»
ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի նախագահ՝
_____
՝«___»,«_____»,202__թ

ՀՀ ԿԳՄՍՆ
«ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊՈԱԿ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐԱՐԱՏ-2019Թ.

ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
_____ՆԻՍՏԻ №___ ՈՐՈՇՈՒՄ

«___»,«_____»,202__թ

Ուսանողական խորհրդի նախագահ՝ _____ Հասմիկ Զեյնալյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԿԳՄՍՆ «ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջի» ՊՈԱԿ-ի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ՈՒԽ) ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ քոլեջ) ուսանողության ներկայացուցչական, ինքնավարության, ինքնակառավարման և նրա շահերը ներկայացնող ընտրովի մարմին է:

1.2 ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական մարմին է:

1.3 ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, քոլեջի կանոնադրությանը, սույն կանոնադրությանը և իր աշխատանքային պլանին համապատասխան:

1.4 ՈՒԽ կանոնադրությունը հաստատում, նրանում փոփոխություններ և լրացումներ կատարում է քոլեջի Կառավարման խորհուրդը՝ ՈՒԽ առաջարկությամբ:

1.5 ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողների շահերը, նպաստում նրանց կրթական, մշակութային, ստեղծագործական, ֆիզիկական և բարոյական զարգացմանը:

1.6 ՈՒԽ-ն կարող է ունենալ իր անվամբ ձևաթղթեր և խորհրդանիշ:

1.7 ՈՒԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի Ուսանողական խորհուրդ /ՈՒԽ/, ռուսերեն՝ Студенческий совет МОНКС РА «Араратскогог государственного колледж» ГНКО /СС/, անգլերեն՝ Student Council of MESCS RA «Ararat state college» SNPO/SC/.

1.8 ՈՒԽ հասցեն է՝ քաղաք Արարատ, Խանջյան 67, 0602, ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ:

II. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ և ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 ՈՒԽ նպատակն է՝

1) քոլեջի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանը առնչվող հարցեր,
2) դուրս բերել ուսանողության կրթական ոլորտի խնդիրները,
3) մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
4) իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը,
5) միավորել ուսանողների ջանքերը՝ նպաստելու ուսանողնության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, ուսանողների գիտական, կրթական, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,
6) կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
7) մասնակցել քոլեջի տարածքում ներքին կարգապահության պահպանմանը:

III.ՈՒԽ-Ի ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1 ՈՒԽ-ն ձևավորվում է առնվազն 15 անդամներից /նախագահություն և անդամներ/,

3.2 ՈՒԽ կազմում կարող են ընդգրկվել առաջին, երկրորդ, երրորդ կուրսերի, ուսանողները, որոնք առաջադրվում են կուրսղեկների կամ ուսանողների կողմից /յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում, ներկուրսային ընտրությունների միջոցով/:

3.3 ՈՒԽ նախագահությունը կազմված է ՈՒԽ նախագահից, փոխնախագահից, քարտուղարից, որոնք ընտրվում են նոր կազմված ՈՒԽ կողմից:

3.4 ՈՒԽ նախագահը ընտրվում է՝ ներկայացնելով աշխատանքային պլան, որը ՈՒԽ նիստում քննարկվելուց հետո հաստատվում է ՈՒԽ կողմից:

3.5 ՈՒԽ նախագահի ընտրությունը կատարվում է փակ քվեարկությամբ, իսկ փոխնախագահի և գլխավոր քարտուղարի ընտրությունը՝ բաց քվեարկությամբ:

3.6 Հավասար ձայներ հավաքելու դեպքում, քվեարկությունը կատարվում է կրկին՝ հավասար ձայներ հավաքած թեկնածուների միջև:

3.7 ՈՒԽ նախագահը իրականացնում է ՈՒԽ աշխատանքների ղեկավարումը:

3.8 ՈՒԽ նախագահը սահմանում է ՈՒԽ նիստերի ժամանակացույցը:

3.9 ՈՒԽ նախագահը ներկայացնում է կատարած աշխատանքների հաշվետվություններ ուսանողների համաժողովների ընթացքում:

3.10 Պատասխանատու քարտուղարը արձանագրում է ուսանողների համաժողովները և ՈՒԽ նիստերը:

3.11 ՈՒԽ փոխնախագահը, ՈՒԽ նախագահի բացակայության պարագայում, կատարում է նախագահի պարտականությունները:

3.12 ՈՒԽ փոխնախագահը կարգավորում է ստորաբաժանումների աշխատանքները:
3.13 ՈՒԽ-ն համարվում է ստեղծված և օգտվում է իր իրավասություններից՝ քոլեջի Կառավարման խորհրդի նախագահին իր անվանական կազմը և գործունեության կարգը պաշտոնապես ներկայացնելու պահից:
3.14 Նոր ՈՒԽ անվանական կազմը սահմնաում է գործող ՈՒԽ-ն, հաստատում է քոլեջի Կառավարման խորհուրդը:
3.15 ՈՒԽ լիազորությունների ժամկետը մեկ ուսումնական տարի է:

IV. ՈՒԽ և ՈՒԽ ԱՄԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 ՈՒԽ-ն իրավունք ունի՝
1) ստեղծել ուսանողական տարբեր ակումբներ և աջակցել դրանց աշխատանքների կազմակերպմանը,
2) արձագանքել և իր իրավասությունների սահմաններում ընթացք տալ սովորողների անհատական և կոլեկտիվ առաջարկներին և դիմումներին,
3) իրականացնել քոլեջի և սույն կանոնադրությունից, ինչպես նաև քոլեջի և ուսանողների հիմնական պարտականություններից և իրավունքներից բխող այլ լիազորություններ:

4.2 ՈՒԽ-ն պարտավոր է՝
1) քոլեջի գործող խորհուրդներում, հանձնաժողովներում ապահովել ուսանողների ներկայությունը,
2) յուրաքանչյուր ուսումնական տարին սկսելուց առնվազն մեկ շաբաթ առաջ ներկայացնել Կառավարման խորհրդի հաստատմանը ՈՒԽ անվանական կազմը, հաստատել իր աշխատանքային պլանը, նիստերի ժամանակացույցը,
3) բարեխղճորեն կատարել ստանձնած պարտականությունները,
4) խուսափել գործունեություններից, որոնք կարող են վնասել ուսանողների, դասախոսների կամ քալեջի հեղինակությանը,
5) յուրաքանչյուր կիսամյակում առնվազն մեկ անգամ կազմակերպել ուսանողների համաժողով, որի ընթացքում քննարկել ուսանողությանը առնչվող հարցեր և ներկայացնել ՈՒԽ հաշվետվությունը:

4.3 ՈՒԽ անդամների լիազորությունները դադարում են, եթե՝
1) առանց հարգելի պատճառի երկու անգամ չի ներկայացել ՈՒԽ-ի նիստերին,
2) ՈՒԽ որոշմամբ՝ աշխատանքից խուսափելու, որոշումները չկատարելու, կարգապահական խախտումների և քոլեջի կանոնադրությամբ սահմանված՝ ուսանողի պարտականությունները չկատարելու դեպքում,
3) ուսումնառությունն ավարտելուց հետո,
4) քոլեջից հեռացվելու դեպքում,
5) անձնական դիմումի համաձայն:

4.4 ՈՒԽ անդամների լիազորությունների դադարեցման մասին որոշումն ընդունում և հաստատում է ՈՒԽ-ն:

V. ՈՒԽ ՆԻՍՏԵՐԸ

5.1 ՈՒԽ նիստ է հրավիրվում յուրաքանչյուր երկու ամիսը առնվազն մեկ անգամ, համաձայն իր նիստերի ժամանակացույցի, անհրաժեշտության դեպքում՝ արտահերթ՝ նախագահի կամ ՈՒԽ անդամների պահանջով:

5.2 Գործող ՈՒԽ-ի տվյալ ուսումնական տարվա համար նախատեսված առաջին նիստում հաստատվում է նոր ՈՒԽ անվանացանկը:

5.3 ՈՒԽ նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են ՈՒԽ անդամների կեսից ավելին: ՈՒԽ որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

5.4 ՈՒԽ նիստը վարում է ՈՒԽ նախագահը: Նրա բացակայության դեպքում՝ փոխնախագահը:

5.5 ՈՒԽ նիստերն արձանագրվում են:

5.6 ՈՒԽ նիստերը փակ են, եթե այլ բան չի որոշվել:

5.7 ՈՒԽ նիստերն անցկացվում են սույն կանոնադրությանը և ՈՒԽ աշխատակարգին համապատասխան:

5.8 ՈՒԽ նիստերին, ըստ անհրաժեշտության, ՈՒԽ որոշմամաբ, խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են հրավիրվել քոլեջի աշխատողներ, ուսանողներ:

VI. ՈՒԽ ԼՈՒԾԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

6.1 ՈՒԽ-ն կարող է լուծարվել քոլեջի Կառավարման խորհրդի որոշմամբ, եթե չի կատարում իր լիազորությունները, երկու անգամ անընդմեջ նիստ չի գումարել:

6.2 ՈՒԽ-ն վերակազմավորվում է, սահմանված կարգով, տասը աշխատանքային օրվա ընթացքում: